

## Ն Ա Մ Ա Կ Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

«Մեակի» № 88-ում պ. Տ. Յովհաննիսեանը «Մուրնի» № 4-ի մէջ «Զեյթունի ներկային ու անցեալին» գրօյլի մասին գրած իմ մատենախօսական նկատողութիւնների առիթով գրում է. «Երբ քննադատը աղաւաղում է փաստերը, անհրաժեշտութիւն է ծագում վերականգնել նեմատրութիւնը»:

Եւ ապացուցանելու համար իր այդ ասածը, նա խաղ է աւնում մի պարբերութեան հետ, քէ արդեօք հեղինակի՞նք է այդ, քէ ձեռագիրը առնուած: Սակայն խնդիրը նրանումն է, որ յիշած գրօյլի հեղինակը ոչ միայն բաւականացնում է այդ անհիմն, անհիշ ձեռագիրը մէջ բերելով, այլ եւ աւելի վերջ, գրօյլի 17-րդ երեսում, ինքը հեղինակը, հիմնուելով «ձեռագրի» բովանդակութեան վրայ, աւելացնում է իր կողմից, որ «Բացի ս. Փրկչէն՝ Բարդուղիմէոս առաքեալը ս. Կարապետ անուամբ մենաստան մ'ալ շինեց Զերմուկի հիւսիսային արեւմտեան կողմը, այժմ աւերակ... եւ այլն»: Առհասարակ «ձեռագրի» եւ հեղինակի սեփական բացատրութիւնների մէջ տարբերութիւններ գտնել դժուար է, այնքան սերտ են դրանց հայեացքները: Գրօյլի հեղինակը յայտնում է, իբր այդ աւետարանը գրուած էր «Քրիստոսի 250 բուականին», այսինքն *ԵՐՐՈՐԴ ԴԱՐՈՒ* կետում...

Այդ անհեթեթութիւնը ակնյայտնի է, ուստի բժախնդրութիւնը, ձեւական անճշտութիւնը մի կողմ թողնենք, նայենք եւ հարցին ըստ ետեւան: Դժուար չէ համոզուել, որ այդ «ձեռագիրը» գրուած է XIX-րդ դարում եւ ո'չ երբ ուրդ, որովհետեւ «ձեռագիրը» ունի մեր ժամանակի արեւմտեան հայերի, այն էլ մի որոշ մասի, ոնր, շարադրութիւնը եւ այլն, ուրեմն եւ այդ «ձեռագիր» անուանուածի գոյութիւնը կասկածելի է, զուրկ է ճշտութիւնից ու նշանակութիւնից, ինչպէս նաեւ գրօյլի հեղինակի բացատրողական վկայութիւնները:

Պ. Տ. Յ. կարծիքով քանի որ այդ գրօյլի «հեղինակը» գտնուում է զարգացման գրեթէ նոյն աստիճանի վրայ, որի վրայ կանգնած են բոլոր գեյթունցիները, հետեւաբար... մարդիկ պար-